Արձանագրություն N 12
ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **03 հունիսի 2022թ.**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օհանյանը.
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Մ. Վարդանյանը, Ս. Կարապետյանը և Ս. Միրոյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցերն են՝

ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի «Օրվա կարգավորման ջրավազանների կառուցման և վերակառուցման» նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման երկփուլ մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 2-րդ փուլին մասնակից կազմակերպությունների կողմից.

1. ներկայացված հայտերի տեխնիկական առաջարկների գնահատում, ամփոփում և հաստատում,
2. ֆինանսական ծրարների բացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով երկփուլ մրցույթի 2-րդ փուլի հրավերի պահանջներին հայտերի համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն

ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի 2-րդ փուլի մասնակից ընկերությունները սահմանված ժամկետում, հրավերի պահանջներին համապատասխան, շտկել են 27.05.2022թ. արձանագրված անհամապատասխանությունները:

Տեխնիկական առաջարկների գնահատումը ամփոփվել է 2022թ. հունիսի 3-ին գնահատող հանձնաժողովի կողմից:

Ստորև բերված են յուրաքանչյուր Տեխնիկական առաջարկի ամփափված ընդհանուր միավորները.

Հ/Հ	Խորհրդատուի անունը	Տեխնիկական առաջարկի ընդհանուր միավորը			
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3	Չափաբաժին 4
1	«Ջինջ» ՍՊԸ	94.84	94.19		94.39
2	«Մոդուլ» ՍՊԸ	95.78	95.60	95.28	95.05
3	«ՀԳՇՆ» ՍՊԸ	96.34		96.35	95.76
4	«Թուսաբ Քնսալթինգ Ինջինիյիրս Քամփնի» ՍՊԸ «Toossab Consulting Engineers Company» LTD	72.38	72.63	72.69	73.0

Հանձնաժողովը որոշեց.

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները համարել ամփոփված (գնահատման միջինացված արդյունքների ամփոփ տեղեկանքը կցվում է) և նշանակել ընկերությունների գնային առաջարկների բացման օրը, ժամը և վայրը:

Ֆինանսական փաթեթների բացման վերաբերյալ

ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգին մասնակից ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական ծրարների բացման օր սահմանել 2022 թվականի հունիսի 7-ը ժամը 15:00, որը տեղի կունենա ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ֆինանսական ծրարների բացման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ ծանուցել Ընկերություններին:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Ա. Օհանյան
անդամներ		Ն. Ալեյան
		Մ. Վարդանյան
		Ս. Կարապետյան
		Ս. Միրոյան
Քարտուղար		Ա. Սարգսյան